

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՀԱՆՁ

Հայցվորի անունը և հասցեն

Հայցվորի անունը
Հայցվորի փոստային հասցեն
Հայցվորի քաղաքը, նահանգը,
փոստային ինդեքսը

Ուղարկման
թվականը
SSA հ.

EDD ԱՆՎՃԱՐ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ՝
1-866-401-2849

Դուք ստանում եք այս ծանուցագիրը, որովհետև Զբաղվածության զարգացման վարչությունը (Employment Development Department, EDD) անկարող է ստուգել Ձեր ինքնությունը: Տեղեկությունները, որոնք տրամադրել էիք Ձեր գործազրկության ապահովագրության հայցը ներկայացնելիս, չեն համապատասխանում Վարչությանը հասանելի տեղեկություններին, կամ Վարչությունն այնպիսի տեղեկություններ է ստացել, որոնք ցույց են տալիս, որ Ձեր ինքնությունը կարող է կեղծված լինել: Երբ ինքնության ճշտման հարց է առաջանում, Վարչությունն անձի ինքնությունը հաստատող փաստաթղթեր է պահանջում՝ ստուգելու համար, որ գործազրկության նպաստները վճարվում են միայն այն անձանց, ովքեր դրանք ստանալու օրինական իրավունք ունեն:

Այս ծանուցագրին կից ներկայացվում է փաստաթղթերի մի ցանկ, որոնք պետք է տրամադրեք Ձեր ինքնությունը ստուգելու նպատակով:

Գործազրկության ապահովագրության նպաստներ ստանալու Ձեր իրավունակության հարցն առկախ է և սպասում է այդ փաստաթղթերի ստացմանը: Վարչությունը կապ կհաստատի գործատուի (գործատուների) և պետական կազմակերպությունների հետ, որպեսզի ստուգի Ձեր ներկայացրած փաստաթղթերն ու տեղեկությունները: Եթե փաստաթղթերը չտրամադրեք, կամ եթե փաստաթղթերը կամ տեղեկությունները Վարչությանը թույլ չտան հաստատել Ձեր ինքնությունը, ապա Դուք նպաստներ ստանալու իրավունակ չեք լինի:

Նպաստներ ստանալու համար պետք է ներկայացնեք Ձեր սոցիալական ապահովության քարտի 9-անիշ համարը (Social Security number, SSN), ինչպես այն տրվել է Սոցիալական ապահովության վարչության (Social Security Administration, SSA) կողմից: Խնդրում ենք ստուգել Ձեր փաստաթղթերը և հաստատել, որ այս ծանուցագրում նշված SSN համարը նույնն է, ինչ SSA-ի կողմից տրվածը: Եթե Վարչությանը հասանելի տեղեկությունները ցույց տան, որ Ձեր տրամադրած SSN-ը հաստատված չէ SSA-ի կողմից, ապա կարող է պահանջվել, որ դիմեք SSA-ին, որպեսզի ստանաք Ձեր SSN-ի հաստատումը և պատճենն ուղարկեք EDD-ին՝ գրասենյակի վերը նշված հասցեով: Ձեր SSA գրասենյակի գտնվելու վայրը կարելի է գտնել SSA-ի կայքում՝ <http://www.socialsecurity.gov/locator>, կամ տեղական հեռախոսագրքի «Դաշնային կառավարություն» ցանկի «Սոցիալական ապահովության վարչություն» (Social Security Administration) բառահոդվածում:

Խնդրում ենք USՈՐԱԳՐԵԼ այս փաստաթուղթը և վերադարձնել տրված կապույտ ծրարով, ինչպես նաև տրամադրել ինքնությունը հաստատող հստակ և ընթեռնելի փաստաթղթեր այս փաստաթղթի ուղարկման թվականից հետո 10 օրացուցային օրվա ընթացքում: Ձեր ամբողջական սոցիալական ապահովության քարտի համարը պետք է նշված լինի ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթի վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ԾՐԱՐԻ ՄԵՁ ՄԻ ՆԵՐԱՌԵՔ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՎԱՐՇՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹՂԹԵՐ, ՔԱՆԻ ՈՐ ԴԱ ԿՀԱՆԳԵՑՆԻ ՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԻ:

Երկրորդ էջում տրված է ինքնության հաստատման համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, որոնք Դուք պարտավոր եք տրամադրել: Տրված են նաև ցուցումներ, թե ինչ անել, եթե փաստաթղթերը տրամադրելու համար ավելի շատ ժամանակ է Ձեզ հարկավոր:

Ես հասկանում եմ, որ օրենքը տուգանքներ է նախատեսում, եթե նպաստներ ստանալու նպատակով կեղծ հայտարարություններ անեմ կամ չներկայացնեմ փաստերը: Կեղծ վկայության համար պատժի ահի ներքո ես հայտարարում եմ, որ իմ տրամադրած տեղեկություններն ու ներկայացրած փաստաթղթերը ճշմարիտ ու ստույգ են և պատկանում են ինձ:		
ՁԵՐ ԱՆՈՒՆԸ՝ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ SSN հ.	USՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՁԵՐ ստորագրությունը պարտադիր է)	ԹՎԱԿԱՆԸ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

SSN համարների հետ կապված առավել հաճախ հանդիպող սխալներից են.

- օգտագործվող SSN համարը սխալ է. հնարավոր է՝ մոռացել եք համարը կամ այն փոխս եք գցել Ձեր գործատուին ներկայացնելու ժամանակ.
- SSA-ում առկա անունը տարբեր է այն անունից, որն օգտագործել եք Ձեր հայրը ներկայացնելու համար. հնարավոր է, որ փոխել եք Ձեր անունը և այդ մասին չեք տեղեկացրել SSA-ին.
- SSA-ում առկա ծննդյան թվականը տարբեր է այն ծննդյան թվականից, որը նշել եք Ձեր հայրը ներկայացնելու ժամանակ:

Դուք պետք է տրամադրեք ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՎ ՄԵՎ հստակ և ընթեռնելի ՓԱՍՏԱԹՂԹԵՐ: (Ընդունելի փաստաթղթերի ցանկին ծանոթացեք կից ներկայացված ներդիրում):

ԵՎ

Դուք պետք է տրամադրեք ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ՄԵՎ ԿԱՄ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ հստակ և ընթեռնելի ՓԱՍՏԱԹՂԹԵՐ: (Ընդունելի փաստաթղթերի ցանկին ծանոթացեք կից ներկայացված ներդիրում):

1. Աշխատանքային գործունեության տվյալներ
2. Հասցեն հաստատող փաստաթուղթ
3. Սոցիալական ապահովության քարտի համարը հաստատող փաստաթուղթ
(**Ձեր սոցիալական ապահովության քարտի պատճենը բավարար չէ այս պահանջի համար**):
4. Ծննդյան թվականը հաստատող փաստաթուղթ (ծննդյան վկայականի պաշտոնապես հաստատված պատճեն)

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՍՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆ ԱՅՍ ՁԵՎԱԹՂԹԻ ՈՒՂԱՐԿՄԱՆ ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ 10 ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉԲԱՎԱՐԱՐԵԼԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԳԵՑՆԵԼ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԵՐԺՄԱՆ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐ ՆԵՐԿԱՑԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԱՌԵԼ ՁԵՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏՏՆ ՀԱՄԱՐԸ:

Դուք փաստաթղթերի հավաքման համար ավելի շատ ժամանակ խնդրելու կամ ներկայացուցչի խորհուրդը ստանալու իրավունք ունեք: Եթե ավելի շատ ժամանակ է հարկավոր, պետք է այս ձևաթղթի ուղարկման թվականից հետո **10 ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ** դիմեք Վարչությանը՝ լրացուցիչ ժամանակ խնդրելու համար: Վարչությանը դիմել կարող եք փոստով կամ հեռախոսով: EDD-ի հասցեն և հեռախոսահամարը նշված են առաջին էջում: Եթե 10-րդ օրվա վերջում փաստաթղթերը ստացված չլինեն, կամ ժամկետի երկարաձգման խնդրանք չներկայացվի, ապա իրավունակության մասին որոշումը կկայացվի առկա տեղեկությունների հիման վրա:

Կալիֆոռնիա նահանգի Գործազրկության ապահովագրության կանոնադրքի (California Unemployment Insurance Code, CUIC) 1253(a) բաժինը սահմանում է, որ գործազրկության ապահովագրության նպաստների բոլոր հայցերը պետք է ներկայացվեն Վարչության կանոնակարգերի համաձայն: CUIC 1257(a) բաժինը սահմանում է, եթե անհատը կեղծ տեղեկություններ է տրամադրում Վարչությանը, որպեսզի ստանա գործազրկության ապահովագրության նպաստներ, նա կարող է տուգանքի ենթարկվել: Կալիֆոռնիայի կանոնակարգերի ժողովածուի (California Code of Regulations) 22-րդ մասի 1326-2 (b)(2)(A) բաժինը սահմանում է, որ Վարչությունը կարող է հայցվորից պահանջել հաստատել SSN-ը՝ որպես SSA-ի կողմից իրեն տրված, եթե Վարչությանը հասանելի տեղեկությունները ցույց տան, որ SSN-ը հավանաբար պատկանում է այլ անձի, կամ այն վավերական համար չէ: